


ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուկարիոյ համար
Տարեկան ֆոր 10
վեցամսեայ " 5
ԿԱՆԻՒԿ

20
ՍԱՆԴԻՄ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արտասահման
Տարեկան ֆոր 12
վեցամսեայ " 6
ԿԱՆԻՒԿ

20
ՍԱՆԴԻՄ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵԾՏԱԿԱՆ

Կը հրատարակուի հաքար օրերը: Ծա-
նուցման տողը 10 Սանդիմ: Երկու քիւ ա-
ռաջ հրատարակուած քերքը 40 Սանդիմ:
Զհրատարակուած գրութիւնը եւ յճրուիր:

Հասցէ
DIRAN PAPA ZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARN A

ԱԶԳԱՅԻՆ

ՄՈՄՈՒԼԻ ՎՐԱՅ ՃՆՇՈՒՄ

Սէկ կողմէն հայ լրագրութեանէն
անաչառ քննադատութիւն կը պահան-
ջուի, մութին մէջ ծածկուած զեղծում-
ներն երևան բերել և զանոնք ժողո-
վորդին ծանօթացնելու կոչում կը լայ,
միւս կողմէն ճշում և բռնութիւն բա-
նեցնել կուզուի նոյն լրագրութեան վը-
րայ, որ սուտն ու իրաւը զանազանել
կաշխատի:

Կառավարութիւնները անիրաւ բռն-
ապետներ կը հռչակուին, որոնք դը-
րաքննութեանէ անցնել կ'ուզեն հրատա-
րակութիւնները, իսկ մեր այս ըսած
ճշումը բանեցնել ուզողը ո՛չ բռնապետ
կառավարութիւն մըն է և ոչ ալ դէռ-
ուիզմի ազանդաւորները, այլ ինքը բա-
րի և արդարասէր կարծուած ժողովուր-
դը, որ կը սպառնայ բաժանորդագրու-
թիւնը դադրեցնել այն թերթին՝ որ
չուզեր հնազանդիլ խմբակի մը հաճոյք-
ներուն և գործիք դառնալ անոր. չու-

զեր արդարութիւնը լսել և նիւթական
սպառնալիքով կ'ուզէ կաշխանդել խմբ-
բազրի մը ազատ հայեցողութիւնը. ան-
կում, յետադիմութիւն չի՞ նշանակեր
այս ժողովրդային ընթացք:

Կիմանանք որ մեր պաշտօնակից-
ներու մէկուն թերթերը ետ դարձուած
է այս տեսակ ամօթալի և միանգամայն
պախարակելի առարկութիւնով, թէ ին-
չո՞ւ իր սե կամ ճերմակ ուզածին պա-
հանջուած գոյնը չէ տուած. այսպիսի
ընթացքներու առջև ինչ կարող է ընել
խմբագիր մը, կամ դադրեցնել ու հը-
րապարակէ քաշուիլ և կամ հաճոյքնե-
րու բուրվառ դառնալ և խունկ ծխել
քմահաճոյքներու:

«Հայ, ինչն ինչպէս առջի օրէն նոյն-
պէս և ասկէ ետքը, ըստ յաճախ յայ-
տարարութեան ցոյց կուտայալէն դէմք
իր դիրքովը. եթէ չեն հաւնիր, իրենց
դիրքը, իրենց ընթացքը ու իրենց դէմ-
քը թող փոխեն. Հայելին միշտ նոյնն է,
անկախ ու ազատ ամեն ճշումէ. իսկ
եթէ մեզի ալ պատահի այսպիսի բան
մը, աւելի կը նորոնք դադրեցնել թեր-

Թը՝ քան թէ քմահաճոյքներու գործիք դառնալ և խայտառակուիլ:

Այստեղ երկրի մը մէջ ապրելուն համար հպարտացող ժողովուրդի մը մամուլի վրայ ըրած այս ճշուժը հակասական է և անարդարանալի:

Շնորհակալութեամբ կը ծանուցանենք թէ՝ Տիար Մ. Զգոնօֆ սիրայօժար ստանձնած է թերթիս պատասխանատուութիւնը:

Ստոյգ աղբիւրէ կը տեղեկանանք որ, Շումսուի մէջ, թաղական, հոգաբարձու և ժողովուրդի մէջ և վարժարանի մասին գծտութիւն ծագած չէ, և եղած տարաձայնութիւնը բոլորովին անհիմն են:

Սիլվէն կը ծանուցանեն թէ ազգային պաշտօնական մարմինք ձեռք ձեռքի տուած համերաշխութեամբ կաշխատին եղեր վարժարանին յառաջդիմութեանը համար: Եկեղեցիին կից ազգային գետնի մը վրայ ձեռնարկեր են կառուցանել երեք խանութներ, որոնցմէ երկուքին շինութիւնը արդէն աւարտած է:

Սիլիսդէէն կ'աւետեն թէ, տեղւոյն հայ ընթերցարանը օրէ օր զարգանալու վիճակի մէջ է. Վառնաէն ալ կը գովեն թէ տեղւոյն ընթերցարանի գոյքերը պարտքի փոխարէն այս շաբթուաճուրդի գրուելով պիտի ծախուին:

Բոժ. — Հէմ լանք հէմ խնդանք:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Իմ խորին շնորհակալիքս և երախտագիտութիւնս կը փութամ հրապարակաւ յայտնել առ Տօբթ. Մ. Վարդանեան, որ արհեստին մէջ ունեցած հմտութեամբ յաջողեցաւ 24 ժամէ 'ի

վեր տղաբերքէ տառապող կինս փրկանդէ աղաւթի և ողջ առողջ թէ զինքը և թէ անդրանիկ զաւակս ինձ յանձնել:

ԶԱՖԻՐԻ ՍԺԱՎՈՑ

Ա Զ Դ

Տեղւոյս Ազգ. երկսեռ վարժարաններու բացումն տեղի պիտի ունենայ յառաջիկայ սեպտեմբեր 1ին, ուստի այդ առթիւ Հոգաբարձութիւնս կը փութայ ծանուցանել արդոյ հասարակութեան որ հաճին ամսոյս 23ին, կիրակի առաւօտ, ժամ 10—12, իսկ ուրիշ օրերը դաժնեալ նոյն ժամերունները՝ այսինքն թաղ. Խորհրդարան, իրենց զաւակաց անուններն արձանագրել տալու:

Ի դիմաց Հոգաբարձութեան

Ատենադպիր Ատենապետ

Մ. Կիրչպէսէրեան Յ. Մ. Թովմասեան

Վառնա, 21 Օգոստ. 98

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայ ժողովուրդ,

Ամենամեծ բերկրութեամբ կը ծանուցանեմ, թէ Կոչնագիրը (բռնողքա) ելած է Շարժում կոչուած թերթի մը դէմ մեր ունեցած դատին, որուն եզրակացութեանը մեզի չափ հետաքրքրութեամբ կը սպաւեա անշուշտ և դուն:

Գտնաւարութիւնը հրապարակաւ տեղի պիտի ունենայ յառաջիկայ սեպտեմբերի 18ին, առաւօտեան ժամը 8ին:

Տ. Ճգնաւորեան

ՀԱՆԵԼՈՒԿԸ ԼՈՒԾՆԵՔ

Պաշտօնակից

«Իրաւունքի 61րդ թիւին մէջ՝ «բացատրութիւն» խորագրին տակ արհեստակիցներու ոմանց կողմէ իր խմբագրատունէն կարմիր նամակի մը և բաժանորդաց հասցէներուն «ել երթանք» եղած ըլլալը կը յայտարարուէր: Գտնի որ այդ ամենակեղտոտ արարքին հե-

դինականություն, հանրութեան բարոյականին առաջնորդելու կոչում ունեցող այդ Գ. ներուն անունները չի տրուիր Իրաւունքի կողմէ, և «Հայելի» ալ այցատութեամբ մը կը փութայ յայտարարելու թէ ինք երբէք զիտակից չէ՝ աւանկ ցած արարքի մը, բնականաբար մենք ալ կը պարտաւորուինք երկտողով կրկնել «Հայելի» ալ այդ բացատրութիւնը աւելի ուժով «Տաւրոս»ի նշկատմամբ ալ, որուն խմբագրութիւնը, ինչպէս աշխարհ արարատ գիտէ, և ոչ մէկ յարաբերութիւն ունեցած չէ՝ «Իրաւունք»ի խմբագրատան հետ:

Սեամ յարգանք
Խմբագիր «Տաւրոս»ի
Յ. ԶԱՐԲԵԱՆ

Ներկայիս կը յայտարարենք թէ՝ «Աշխարհ»ի խմբագրութիւնը «Իրաւունք», ի տպարանէն ել ներքաճի եղած կարմիր նամակի մը և հասցեներու խնդրոյն մէջ ոչ և է մեղսակցութիւն ունեցած չէ:

Խմբագրութիւն Աշխարհի



ԶԱՐՄԱՆԱԼԻՔ

Հարւատը՝ ոսկին կը պաշտէ,
Արհեստաւորը անոր համար կ'աշխատի.
Գործաւորը երկուքին ալ կը ծառայէ.
Փաստաբանը՝ աս երեքը իրար կը ձգէ.
Գինեպանը չորսն ալ կը գինովցնէ.
Գեղագործը հինգն ալ կը թունաւորէ.
Բժիշկը վեցն ալ կը մեռցնէ.
Ժամակոչը եօթնն ալ կը պատնէ.
Գերեզմանափորը ութնն ալ կը թաղէ.
Քահանան իննինն ալ թողութիւն կուտայ.
Հողը տասնն ալ մ'կէն կը մարսէ:

Թ.

ՍԻԿԱՌԻ Ե՝ ՈՒՍԻՆ

Սրտին խորհուրդները իր սիրելիին պատմելու համար ճակութիւնը չունեցող դարավերջիկ մարդ մը, ճարահատած, սիկառի մուխին միջնորդութիւնը խնդրեք է հետեւեալ երգով:

Ո՛ր իմ սիկառի մուխն թեթեւիկ,
Շուտ կը թափանցես իմ սիրտը, մեղմիկ,
Գերազանցելով ճարտար ըմբիշներ,
Որ չկարեն տեսնել սրտերու խորեր:
Ծխողիս սրտին գազարնիքը տեսնես,
Գաղտնապահութեամբ օդին մէջ չուես.
Բեզէ կը խնդրեմ, անգամ մը գոնէ
Լեզուիս չկրցածը սիրելոյս պատմէ:
Զամէն



ՀԵՌԱԳՐԱԿԱՆ

(Աժանս Բոժոժիկ և Ընկ.)

Վառնա

Ոստիկանապետ Պ. Տաւրոս իր տառաւիտ նոր համադրեալովը հոս հասաւ քիչ ատենէն հրապարակին վրայ երեւոյր համար այժմէն արդու զարգովը զբաղուած է:

Կրթական նախարար Պ. Իսաուրեք բնական այցելութեան ելաւ իր իրաւասութեան տակ գտնուած թեմերու... բաժանորդներուն:

Ի ներկայութեան մեծ հրամանատարի, նախապէս պատրաստուած քննիչ մը վրայ, Ամիրալի նաւատորմիկին մէջ մանօրէն մը դարձաւ և բնագործ մը տեղի ունեցաւ սպայակոյտի երջում գործուն... գլուխներու մէջ: Մեծ հրամանատարը զգացած ուրախութենէն արբելու, անյաճ կիրակի գիշեր թաղապետական ծովեզերեայ պարտէզին մէջ, սրտերը թրթռացնող ձայնով Ծիծեռնա կը երգեց:

ԾԱՆՈԹ ԴԵՄՔԵՐ



ԺԱ.

Տ. — Գ. — Փ.

Միջինէն բարձր հասակ, ծաւի աչքեր, ալեխառն մազեր, 48 տարեկան, Մամուրի-տանացիի խափշիկի մը դիմագծերով:

Չմեռը տէրպապաի մօրուքի պէս խառն 'ի խուռն մօրուք մը, իսկ ամառը՝ կըզակին վրայ նուրբ, սրածայր մէկ քանի մազեր կ'երևան, երեսին ամելի դպցունել տըռած չէ, այլ մկրատել կուտայ:

Քալուածքը աճապարանքով ու հապճեպ թեւերը շարժելով, օրուան մէջ մէկ քանի քիլոմէթր ճամբայ կրնայ քայլել առանց դադար առնելու:

Գլուխը դրած է փսիւթէ աշառէ-քիւպիի գլխարկ մը. նորաձեւութեան ու արդուզարդի չի հետեւիր. հագածին ձեւը կամ եղանակին յարմարիլը իրեն համար կարեօրութիւն չունի, հերիք է որ հագուած ըլլայ:

«Միտիր չի կըլներ» շուկայի քերականութիւնը կարգացած լմնցուցած է, ատոր մէջ չի կրնար մէկը մըցիլ իրեն հետ: Երբ կը տեսնէ մէկը, որ աչքին թօզ փշել կամ պարտքը չվճարել կ'ուզէ, այն ատեն դէմքը ծամածռելով, գլուխը մէկ կողմ դարձուցած՝ *սեսնուի՛նի* կը պոռայ, աս տեսնուինքը որ ամեն բան կը նշանակէ, և որուն հեղինակը ըլլալու պատիւը ունեցած է 5 տարի առաջէն, իր շէնքնոյ լեզուին տակ անանկ հնչում մը կը ստանայ որ *սես* կորսնցնելով միայն *սնուի՛նի* կը մնայ:

Խոստովանինք որ այդ «տեսնուինք»-էն շատ ու շատեր կը վախնան. անոնք որ ինքզինքնին մինակ կարծելով մուլ խաւերու կամ զբօսավայրերու մէջ տեսակ տեսակ անխոստովանելի բարբերու մէջ կը գտնուին, որ ոչ իրենց պատուոյն և ոչ ալ պատկանած հա-

տարակութեան պատիւ կը բերէ, յանկարծ մուլին մէջէն *սեսնուի՛նի* ձայն մը առնելով՝ ապշած կը մնան, որովհետեւ Պ. Տ. Փ. ի Արգոսի աչքերը տեսած է զիրենք:

Աս խմբագրէն ոչ միայն մեծերը հապա տղաքներն ալ կը վախնան. շատ անգամ մայրերը երբ իրենց անառակ զաւակները կերպով մը չեն կրնար զգաստացնել. Պ. Տ. Փ. ը կուգայ կոր կըսեն. աս ազգարարութիւնը բաւական կըլլայ տղուն ձայնը կտրել տալու, ինչպէս որ անոնցմէ մէկը օր մը մեր Պ. խմբագրին դէմքը տեսնելու դժբաղդութիւնը ունենալով, երկու շաբաթ շարունակ անոր դէմքը երազելով վախցած ու լացած է:

Կ. Պոլսոյ Խասգիւղի մէջ ծնած ու մինչեւ վերջը հոն բնակած է. երկու տարի առաջ լուրդ ու փապու՛ն փախած վառնա եկած էր. նաւամատոյցին վրայ ամեն որ ողջունեց անոր գալուստը *սեսնուի՛նի* միով: 19 տարեկան եղած ատենը երեցած է գրական ասպարէզին վրայ. իր առաջին հեղինակութիւնը եղած է 1869ին «Խասգիւղի քնարչի» կը, անուն տեղական կեանքէ վէպ մը: Ուրիշ խել մը թատերական գիրքերու հրատարակչութիւնը քրտն է: 1886ին Հնչակ անուն 5 հատոր զաւեշտութիւթ կը հրատարակէր, բայց միեւնոյն անունով ծանօթ թերթի մը Եւրոպոյ մէջ հրատարակուելը լըսուելուն, *սեսնուի՛նի* Հնչակ անունը Սուրհանդակի փոխել տուած է. ան ալ հազիւ 19 թիւ կը հրատարակուի՝ ահա միեւնոյն անունով Ամերիկայի մէջ թերթ մը երևան կ'ելլէ, Մէարիֆը այդ անունն ալ մուղիր կը գտնէ և Պ. Տ. Փ. ի թերթը նորէն կը տուժէ. այս անգամ Մէարիֆը՝ «Ժողովուրդը պէտք չէ որ խնդայ» ըսելով զաւեշտութիւթը բոլորովին կը դադրեցնէ: Պ. Տ. Փ. չի վհատիր, Չանքա անունով թրքատու և թրքաբարբառ զաւեշտութիւթ մը կը հիմնէ, բայց ինչ օգուտ, բարձրագոյն հրամամանաւ այդ ալ կարգիւղի: Երբ Վարնա կուգայ, անդին ասդին կիյնայ, 40—50 քիլո տպագրական տառեր ձեռք անցունելով՝

իր սրտին փափագին գոհացում կուտայ, այն է հիմնել Հայեղի անուն զաւելտաթերթ մը զոր տարի ու կէսէ 'ի վեր կը շարունակէ: Խաթրը ըսուած բանը չգիտեր, ըլլայ բաժանորդ, ըլլայ բարեկամ, անոր ըրած զեղծումը կը ձողկէ անաչառապէս, որով մէկը չի կրնար հետը մշտնջենաւոր բարեկամ մը նալ:

Պ. Տ. Փ. դիւրաբորութեան է, շուտ կը բարկանայ, մանաւանդ՝ երբ բաժանորդագինը ժամանակին չի կրնալով գանձել՝ պիտի մնին հաւասարակշռութիւնը կորսնցնէ:

Երբ կը տեսնէ որ իրողութիւն մը խընդիր մը հրապարակ կը նետուի, ասդին անդին կիյնայ, կը հասկնայ, կ'ուսումնասիրէ ու մեծամասնութիւն կը փնտռէ. գտա՞ւ մի, ա՛լ կը սկսի կսմիթներու հարուածներ տեղալ թերթին միջոցաւ. այդ կսմիթներուն համը անոնք գիտեն ու կը ճանչնան որ, իրենց սրտին ու յիշողութեան մէջ կը պահեն ատոնց սուր և անմոռանալի ցաւերը:

Գաղթականութեան վերադարձին բաղձացողներէն չէ. սիրտը կը բրթի որ կը դառնան իրենց տեղերը և ճրիթեր կարդացողներուն թիւը կը նուազի:

Պ. Տ. Փ. կը ներկայացնէ դէմքը ան նաւապետին, որ առագաստանաւովը հանդարտ ու միապաղաղ ծովուն վրայ, յուսահատ, աչքերը հորիզոնին, ձեռքերը երկինք բարձրացնելով կը սպասէ նպաստաւոր հովի մը, որպէս զի ան կողմը դարձնէ իր նաւը՝ ջուրին վրայ քալեցնելու համար:

X

ԱՄԵՆ ԲԱՆ ԻՐ ՏԵՂԻՆ

Վերջին նորաձեւութեան համեմատ, հարսնիքներու մէջ ծափահարութիւններ խըլելու համար սեղանի վրայ ձանձրացուցիչ բաժակաձառեր արտասանելով կոչնականաց բռնը բերող չլթ գըրըլըմ պարոն մը՝ անցեալները կը գտնուի գաղթական ձկնորսի մը հարսնիքը, ու նկատողութեան չառնելով թէ

ներկայք իր ըսելիքներէն բան մը հասկցող դասակարգէ չեն, գինիին բաժակը ձեռքը, «Մեծարոյ տեարք, Ազնուհի տիկնայք, Փափկասուն օրիորդք. Եւանդուն միւսիւք եւ կայտառ պատանիք» նախաբանով երկայն նորավէպ մը կը սկսի, նիւթ ընտրելով՝ փեսին եւ հարսին ի ծննդենէ Ս. Աւագանին մինչեւ այն օրը ո'րպիսի անմեղութեամբ մեծնալին, ի՞նչպէս զիրար ճանչնալին, մանչուն աղւոր ձուկ բռնելը, հարսին Տիկնայք բանելը, վերջապէս փեսին նուէրը ու աղջկան օժիտը, որոց վրայ կ'սկսի շաղակրատել, նմանեցնելով փեսան՝ Տեղեմաքի, հարսը՝ Կալիփոյի, եւ խոհարարուհի Թաթիպէ խաթունն ալ՝—անշուշտ հարսանեկան բիլավ զէրտէն աղւոր եփած ըլլալուն համար—Մենատորի:

Բայց անզգայ կոչնականք. թէպէտեւ պարոնը զիս ծափահարեցէք ըսելու պէս մերթ կը շեշտէ իւր խօսքերը եւ մերթ կանգ կառնու, այլ ծափահարութեան նշոյլն անգամ չի տեսնար. ուստի անոնց անտարբերութեանը յաղթելու եւ ծափահարութիւնը խըլելու համար, բարկացած՝ այնչափ կ'երկարէ իւր ճոռոմաբանութիւնը, որ ունկնդրաց համբերութիւնը կը հատցնէ, եւ որոնք կ'սկըսին դիտողութեան, թող զայն որ ուղածին պէս էօզէնմիշ ըլլայ, մինչեւ որ հավէտը առնէ:

— Տայի Անտիկ, մէք թէպտէ՞մի յիդ, նէ՞յիդ, մուշու բարո՞ղ մու վերի յօր:

— Պիլմէմ ամա, ալլահալէմ ամա— Լուրք օգույօր:

— Քա չէ ճանըմ, չար կըսէ կոր:

— Էյ շիմտի եագըշըգ ալտը՞ մը պու, տիւյիւն էվինտէ չար սէօյլէնի՞ր մի, թաթլը սէյլէմէլի:

— Քա ճանըմ, չար չէ, Ինթօս հանըմը չկըցաւ հասկցնել, ճառ է ըսածը ճառ:

— Էյի ամա. շիմտի ճառըն լամպանըն իւթիւնէ բարող վէրէճէք վագը՞թ մը տըր:

— Ախպար նէ՞ զարարը վար, ճառ օլմամը՞ ըմը տա՞ լամպա օլմուշ, պիլէ ըշըգ վէ՞քմէ յօր մը:

— Շիմտի կիտիպ բիրայլան պիրտէ ճա՞ն ալմալը .

— Քա ճանըմ, ինչե՛ր կըսէք կոր, կիտես քի աշտարակն էնք . ճառ տէյի, հարսնիքներու մէջ ճահիլները ասանկ բաներ կըսեն . . .

— Տուվա՞ տըր պու, նէ՞ տիր .

— Ա՛ռգես տուվա սեպէ . կ՛ուզես տառօս :

— Նէ՞ պիշիմ տուվա տառօս տըր պուքի՝ իքի լազը՞տըտա պիր՝ բարմախ խալէմ (բտրեմաղթեմ) բարմախ խալէմ տէյօր :

Մամիկը . — Քա եւվրում, բսօրճիք մը օլտուն սուս էղէք քի՝ մտիկ ընհնք . բէք աղւոր կըսէ կոր :

— Ի՞նչը մտիկ պիտի ընես, դուն կը հասկնա՞ս կոր ըսածները . բարմախ խալէմ նէ՞ տէմէք տիր :

— Ձիյտեմ՝ ամա, էյ բէք շուռութու կըսէ կոր . պիւլպիւլ է կըրեր :

— Ա՛ռգէ նէ բաբաղան կըրերի, պէն պիր շէյ աղնա՛տըգտան սօնրա . . .

— Իսթէր աղնա, իսթէր աղնամա, մեղայ տէր իմ Ասված, լաիւրտըները չաթըր չաթըր մարդուն պէյնը կը խօթէ կոր :

— Պաշ աղըըսը վէրիյօր, մամիկ .

— Աղւոր բանը մտիկ կ՛ըլլուի .

— Վէսսէլամ, չի հասկցած բանս ինտօ՞ր մտիկ ընեմ . հէմ ան քի ալ խտար զօղամիշ կ՛ընես կոր նէ՝ սա քուկին հասկըցածդ ինծի ալ ըսէ :

— Ի՞նչը պիտի ըսեմ, իշթէ ճահիլը ճօշմիշ էղեր, օտկով ծառքով ալ թարիֆ կընէ կոր . հէմէն պօլը սիրեմ :

— Էյ մօրուքն ալ կ՛երերցնէ կսր պըլըխն ալ կը խաղցունէ կոր ամա, նէ՞ Փայտա, մենք պան մը չենք հասկնար կոր :

— Տայի Անտիկ, պուենուն սօնու .

— Սօնու՝ բիլավ—զէրտեմիզ սօնուտու : Այս խօսքին վրայ յանկարծ իրենցմէ մին կը գոչէ .

— Ա՛խպար, տառօսու օլանըն էվինէ օլմայանըն պաշընա, տէյիպ աթմալը . եօգսա՝ հէլվա խուզին (մեղրալուսին) իլէ բարմախ խալէմին սօնու կէլմէյէճէք .

Այս առաջարկը միահամուռ կ՛ընդունուի, եւ գաւաթները կը պարպուին ցնծութեամբ :

— Իսկ բաժակաճառախօս պարոնը, այլ եւս յուշաբերեալ, տեսնելով որ ամեն մարդ գլուխը կտնած բիլավ-ղէրտէն կ՛ուտէ, կը պարտաւորի ձայնը կտրելով տեղը նստիլ :

Թերեւս իւր բաժակաճառը մտովի ամբողջացուց :

Յարմար առիթ է կարծենք յիշեցնել թէ՝ « ամեն բան իր տեղին կը վայլէ » :

ԾՈՎՈՒ ԲԱՂՆԻՔԻ ՄԷՋ

ԿՆԻԿՆԵՐՈՒՆ ԿՌԻՒԵԼ

Կ . Պոլսէն կը գրեն .

« Հայտար բաշաի կանանց յատուկ բաղնիքին մէջ . անցեալ օր հետեւեալ զուարճալի դէպքը պատահած է .

« Բերաջի տիկին մը, որ բաղնիքին մէջ իրեն յատուկ խցիկ մը վարձած էր, տեսնելով որ նոյն օրը ուրիշ կին մը եկեր հոն մտեր է, բաղնապանուհիին կը բողբօքէ եւ զայն դուրս հանել կուտայ : Դուրս ելլող կինը՝ այս բանը իր արժանապատուութեան դէմ անարգանք համարելով, կը բարկանայ եւ խցիկին դրանը առջեւ կեցած՝ ներսը գտնուող նոյն տիկնոջ ելքը կարգիլէ, պարզապէս կը բանտարկէ զայն : Ասոր վրայ երկու տիկիններ (մէկը ներսէն միւսը դուրսէն) իրարու հետ բաւական կուտան կ՛առնեն . վերջապէս բանտարկեալ տիկինը ուժը ամփոփելով՝ աբաջի հարուածով մը դուռը կը բանայ եւ բանտապանուհին գետին կը տապալէ : Ծեծկուութիւնը կը սկսի . իրարու մազեր քաշելու եւ երեսներն ճանկատելու միջոցին՝ երկուքը մեկանց ծովը կիյնան . հոն քիչ մը ջուր կըլլելով զովանալէ հտքը, բարկութիւնն իրիշեցընեն, սակայն նոյն միջոցին ուրիշ տիկիններու մէջ ալ բանակոխէ . մը կը սկսի, « այս ինչ տիկինը իրաւացի էր, այն ինչը անիրաւ էր » ըսելով, եւ այնչափ կը սաստկանայ որ անոնք

ալ իրարու մազերէ կը սկսին քաշել եւ վերջապէս աւազանին մէջ կը գլտորին: Այս խառնակութենէն առաւ-փախաւուհի մը օգտուելով, խցիկները խուզարկելու կ'ելլէ եւ բաւական հագուստեղէն ժողուելով կծիկը կը դնէ: Վերջապէս, հաշտութեան թաշկինակը կը ծածանի եւ կարգը հագուելուն կուգայ. երեւակայելու է հագուստին գողցնել տուող տիկիններուն վիճակը, որոնք կը պարտաւորին հոն սպասել մէկ երկու ժամ, որպէս զի դուրսէն ուրիշ հագուստներ բերուին, եւ որոնցմէ մեծ մասն ալ առոնց գուլպայի դուրս ելել, են: »



ԵՐԿՈՒ ԲԱՐԵԿԱՄԻ

— Նասիպ աղա, սա բիացաին խառնութեաններուն մէջ ամենէն հարուստը ո՞րն է:

— Մեր ամեն օր նստած խաճկէին սըրան թօհաֆճի մը կայ, անկէ ուրիշ հարուստ խառնութեան չեմ ճանչնար:

— Ի՞նչ կըսես աղբար, ադ մարդը այդչափ հարստութիւնը ո՞ւրկէջ գտեր է:

— Ուրկէջ գտած ըլլալը չիտեմ ամա՛ 6 ամիս է թրամբէթաներով 100ին 50 պակասով ապրանք կը ծախէ, տահա զարաւրին կը դիմենայ կոր, ան գիտեմ:

Մարդ մը իւր 18 տարեկան տղան աւուսնացնել կելնէ, մէկ բանի բարեկամներ դիտողութիւն կընեն և թէ շատ կանուխէն կա-

մուսնացնէ կոր. աւելի աղէկ չըլլար որ քիչ մ'ալ մեծնայ ու խելքը գլուխը գալէն ետքը ամուսնանայ:

— Ի՞նչ կըսէք աղբար, կըսէ, եթէ քիչ մը խելքը գլուխը գայ, ամենեւին չամուսնանար:

ՁԵԿՈՅՑ

Պուրկաղի մէջ ծնունդ առած 20,000 ֆրանքի նուիրատուներու մասին նորագոյն հետաքրքրաշարժ տեղեկութիւններ առած ենք, զոր յաջորդ թերթով պիտի հրատարակենք:



ԱՄԻՐԻԱՆԵԱՆՑ ԱԼԲԻԱՐԱՆ

ՎԱՌՆԱ

Կընդունուին թոշակաւոր աղջիկներ եւ փոքր մանչեր, որոնք Օր. Լ. Ամիրխանեանցի վարչութեան ներքե կուսանին հայերէն, եւրոպական լեզուներ եւ դաշնակ:

Վարժարանը կը բացուի առաջիկայ սեպտեմբերին: 3



ԲԳԱՐԱՆ ԹԱՏԵՐԱԿԱՆ

Բովանդակութիւն թատերական երգերու եւ պարերու. նաեւ վիճակ ընկերական: Գին մէկ ֆրանք:



ԳՈՒՀԱԿ

Ա. ՊԱԳԱՅԻ

կամ Զուարճալի Բաղդադոյց ընտանեկան

Երկսեռ ամէն հասակի ընթերցողաց ըզբօսալի ժամանցներ տուող սոյն գիրքը կը ծախուի մեկ ֆրանքի, թղթատարի ծախքով դիմել խմբագրութեան:

ОТГОВОРНИКЪ М. СКОНОВЪ



ՆԱԹԱՆ ՊԷՑ ԱՄԻՐԻԱՆԵԱՆ

ՄԻՒՆԻԶԵՆԻ

Թագաւորական Ազգայնական
Վկայութեամբ

Կուտայ գաշնամուրի եւ ուրիշ նուա-
գարաններու եւ երգի դասեր թէ՛ գործնա-
կանը թէ տեսականը, նաեւ երաժշտութեան
պատմութիւն :

Հասցէն Պատ. Ամիրխանեանցի բնակա-
րանը :



ՌԱՇԱՐԱՆ ԵՎ ԶԲՈՍԱՐԱՆ

ՏԻԳՐԱՆ ԹԻՒՖԷՆՃԵԱՆ Ե ԸՆԿ.

Հաճի Բանաբօին ճիշդ գէմը

Հարսանեաց եւ խնձորներու սպասներ
ալ կը գտնուին, որոնք դիւրամատչելի գի-
ներով վարձու կը տրուին :

«Հայելի»ի Ա. տարւոյ թիւերը
կաղմեալ կը վաճառին գին տասը ֆր.
թղթատարի ծախքը մեր վրայ :

Վայրկենական Տպագրութիւն

Ա Յ Յ Ե Տ Ո Մ Ս Ի

100 հատը 2 ֆր. Ի կը տպագրուի եւ ա-
նոր տուփին մէջ կը գտնուի Այցեւորման գոր-
ծածութեան հրահանգը պարունակոր տետրակ
մը, որուն կողքին վրայ այցեւորման տիրոջ ա-
նունը տպագրուած պիտի ըլլայ : Դիմել խմբա-
գրութեան : Քաղաքներէ ըլլալիք յանձնարա-
րութեան թղթատարի ծախք 30 սանդիմը
յանձնարարողին վրայ է : Դրամի փոխարէն
Պուլկարական 5, 10 եւ 15 սանդիմնոց նա-
մակադրօշմ կ'ընդունուի : Կտնխիկ :

Տ Պ Ա Ր Ա Ն

ՀԱՅԵԼԻ

ՀԱՆԴԵՍԻ

Ամէն լեզուէ հրատարակութիւնք
Այցեւորման, հասցէտու, նամակա-
շիւիս, հրաւիրատու, բարենիշ. տոմ-
սակ եայլն եայլն թէ՛ պարզ եւ թէ
ոսկեզօծեալ մէկ քանի գոյներով կը տը-
պագրուին : Քաղաքներէ եկած յանձ-
նարարութիւնք փութով կը կատարուին .
Գին գոհացուցիչ : Դիմել Հայելիի խմբ-
ագրութեան :



ԿԻՇԿԻԱԿԱՐ
ՍՏԵՓԱՆ ԽՕՐԱՍՏԱՆՃԵԱՆ

Մուսալա, հաճի Հասան աղաի օթելին
տակ

Ճաշակաւոր, տոկուն, ձեւաւոր կոշիկ
շինել տալ ուզողը պէտք է դիմէ Պ. Ստե-
փան Խօրասանճեանի, որուն ճարտարութիւնը
մէկ փորձով երեւան կեցւայ :

Դիւերը դիւրամատչելի :



Կ Ա Ն Վ Ա Ն Ի Ս Ի

Ամեն տեսակ
տպագրական կա-



ղաղարներ պատրաստող, նաեւ
յանձնական եւ թէ՛ ասկարական կնիքներ :
ոյն կնիքները որ քստ վերջին զրույթն
լինձէ կը շինուին, հրապարակի վրայ երե-
ւած քառաչուէ կնիքներէ աւելի դիմացկուն են
եւ դիւրութեամբ կը տպագրուին . գինն ալ
քառաչուի գինէն տարբերութիւն չունի : Քա-
ղաքներէ ըլլալիք յանձնարարութիւնք փութով
կը կատարուին : Դիմել ի վառնա Զիլինկիր-
էր փողոց թիւ 561 : Գին գոհացուցիչ :